ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

XVIII, № 6, 1977

Журн. экспер. и клинич. медицины

Ս. Մ. ԴԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄՈՏ

Աղջիկների դաշտանային ֆունկցիայի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ժամանակին ախտորոշելու և անհրաժեշտության դեպքում բուժելու այն ախտաբանական շեղումները, որոնք կարող են պատճառ հանդիսանալ զանազան հիվանդությունների։

Մեր կողմից հետազոտված աղջիկների դաշտանը հիմնականում սկսվել է ժամանակին և ունեցել է կանոնավոր ընթացք։

Երեխաների և դեռահասների առողջության հիմնական ցուցանիշներից մեկը սեռական զարգացման տարիքային առանձնահատկությունների ուսումնասիրությունն է։ Հայտնի է, որ սեռական գեղձերի գեներատիվ ֆունկցիայի հետ սկսում են աճել ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները, դրա հետ մեկտեղ՝ առաջնային և երկրորդային սեռական նշանները, ապա սկսվում է դաշտանային ֆունկցիան։ Համաձայն գրականության տվյալների տարբեր աշխարհագրական և կենցաղային պայմաններում դաշտանը սկսվում է տարբեր տարիքում [2, 6]։ Չի բացառվում և այն հանգամանքը, որ վերջին տասնամյակում մեր միության տարբեր վայրերում սեռական հասունացումը տեղի է ունենում ավելի վաղ [3, 4, 5, 7, 9, 10]։ Հաշվի առնելով տարբեր գործոնների ազդեցությունը սեռական հասունացման վրա, մենք ևս զբաղվել ենք այդ հարցի ուսումնասիրմամբ։ Սիսիանի շրջանի տարբեր դպրոցների 7—18 տարեկան 1443 աղջիկների մոտ ուսումնասիրել ենք դաշտանային ֆունկցիան և սեռական հասունացումը, որը սովորաբար սկսվում է երկրորդային սեռական նշանների ի հայտ գալով, այն է՝ բուսականության աճով անութային փոսերում և ցայլքի վրա, կրծքագեղձերի զարգացումով և դրա հետ կապված օրգանիզմի ընդհանուր փոփոխություններով։

Երկրորդային սեռական նշանների ճիշտ գնահատման համար օգտվել ենք Ա. Բ. Ստավիցկայայի և Դ. Ի. Արոնի [11] կողմից առաջարկված բանաձևով— A, P, Ma, Me. Յուրաքանչյուր տարիքի համար կատարված բոլոր ցուցանիշները մշակել ենք առանձին-առանձին։ Հետազոտություններից պարզվել է, որ երկրորդային սեռական նշանների զարգացումը հիմնականում սկսվել է 11—12 տարեկանից (աղյուսակ № 1), շարունակվելով հաջորդ տարիներին։ Անութային փոսի և ցայլքի բուսականությունը ավելի արտահայտվել է 13 տարեկան աղջիկների մոտ, իսկ կրծքագեղձերի զարգացումը՝ 13—14 տարեկանում։ Այդ շրջանում փոխվել է նաև աղջկա արտաքին տեսքը, մարմնի ձևը և հակումները։ Սակայն, վերջիններս շարունակվել են նաև հաջորդ տարիներին։ Երկրորդային սեռական նշանների զարգացմանը հաջորդում է դաշտանը, որը մեր կողմից հետազոտված 1443 աղջիկներից դիտվել է 620-ի մոտ (49,89%, աղյուսակ № 2)։ Առանձին տարիքային խմբերում դաշտան ունեցող աղջիկների քանակը 12 տարեկանից հետո ավելացել է, առավելագույնի հասնելով 17—18 տարե-

կանում։ Սիսիանի շրջանի դպրոցական հասակի աղջիկների միջին դաշտա-տերոլիտոտոմիա և հեմինեֆրէկտոմիա։

Գ. Յա. Արեշևի [1] կողմից կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Երևան քաղաքի աղջիկների սեռական հասունացման և դաշտանը սկսվելու միջին տարիքը 15,055 տարեկանն է։ Միաժամանակ, հեղինակը, նշված ցուցանիշի որոշ տարբերություն է նկատել քաղաքի և գյուղի աղջիկների մոտ, որը բացատրել է կենցաղային և աշխատանքային պայմանների առանձնահատկություններով։ Ըստ Պ. Հ. Մարգարյանի՝ [8] Հայաստանում արբունքային տարիքը 15 տարեկանն է։ Սակայն, հետագա տարիներին կատարված հետազոտություններից պարզվել է, որ Երևանի պայմաններում դաշտանը սկսվում է 13,85±1,2 տարեկան հասակում, իսկ բնիկ երևանցիների մոտ՝ 13,7±1,1, 13,04±0,03, 13,49±0,05 [4, 5, 10] տարիքում։

Աղյուսակ 1

Երկրորդային սեռական նշանների զարգացումը Սիսիանի շրջանի դպրոցական աղջիկների մոտ (տոկոսներով)

Ըստ տարիքի	Դեպքերի թիվը	Անութային փոսի բուսականությունը				Ցայլքի բուսականությունը					Կրծքագեղձերի զարգացման աստիճանը			
		A_0	A_1	A_2	A_3	P_0	P_1	P_2	P_3	P_4	Ma_1	Ma_2	Ma_3	Ma_4
7	44	100,00	—	—	—	100,00	—	—	—	—	100,00	—	—	—
8	107	100,0	—	—	—	99,07	0,93	—	—	—	100,00	—	—	—
9	114	99,12	0,88	—	—	93,86	6,14	—	—	—	96,49	3,51	—	—
10	115	83,48	16,52	—	—	72,17	26,96	0,87	—	—	75,65	24,35	—	—
11	141	49,65	43,97	6,38	—	46,10	48,23	5,67	—	—	64,54	35,46	—	—
12	137	43,06	40,15	16,06	0,73	36,50	35,77	24,82	2,91	—	40,88	50,36	8,03	0,73
13	144	16,67	38,89	43,05	1,39	15,97	29,17	45,14	9,72	--	20,83	63,89	15,28	—
14	128	2,34	21,88	74,22	1,56	3,91	7,81	64,84	21,10	2,34	3,13	44,53	52,34	—
15	130	0,77	6,15	63,08	30,00	0,77	4,61	29,23	63,85	1,54	0,77	15,38	81,54	2,31
16	164	—	1,83	56,71	41,46	—	1,22	15,24	81,71	1,83	—	8,54	89,63	1,83
17	160	0,63	1,25	40,00	58,12	—	0,62	8,75	85,63	5,00	0,62	4,37	88,13	6,88
18	59	—	—	44,07	55,93	—	—	16,95	77,97	5,08	—	8,47	83,06	8,47

Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ Հայաստանի տարբեր վայրերում (Երևան, Արտաշատ, Սիսիանի շրջան) աղջիկների դաշտանը սկսվում է 13,04±0,03, 13,49±0,05 և 13,55±0,04 տարիքում, այսինքն՝ ավելի վաղ, քան նախկին տարիներին։ Դա արդյունք է սոցիալական, կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման և երեխաների ավելի բարձր ֆիզիկական զարգացման

Առաջին անգամ կանոնավոր դաշտան ունենալուց հետո դաշտանային ցիկլ են ունեցել 522 աղջիկներ՝ 84,19% (աղյուսակ № 4), 17-ի մոտ՝ (2,74%) այն կանոնավորվել է 3—4 ամիս հետո, 13-ի մոտ՝ (2,10 %) 1—2 տարի անց, իսկ 45 աղջիկներ, (7,26 %) մեր հետազոտության ժամանակ, ունեցել են անկանոն դաշտանային ցիկլ։ Վերջինս դիտվել է տարբեր տարիքում՝ 13 տարեկան՝ 5 դեպք, 14 տ.՝ 5, 15 տ.՝ 10, 16 տ.՝ 14, 17 տ.՝ 9 և 18 տ.՝ 2 դեպք։ 23

Աղյուսակ 2

Առաջին դաշտանը սկսվելու ժամանակը

Երեխաների քանակը	Տարիքը												
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	ընդամենը
Բացարձակ թիվը	—	—	—	1	14	64	228	208	87	18	—	—	620
տոկոսը	—	—	—	0,2	2,3	10,3	36,8	33,5	14,0	2,9	—	—	100,0

Աղյուսակ 3

Տուրքանչյուր տարիքային խմբում դաշտան ունեցող աղջիկների քանակը

Դաշտանի առկայությունը	Տարիքը												
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	ընդամենը
Դաշտան են տեսել (բացարձակ թիվը)	—	—	—	—	—	10	37	77	117	160	160	59	620
տոկոսը	—	—	—	—	—	7,3	25,7	60,16	90,0	97,6	100,0	100,0	
Դաշտան չեն տեսել (բացարձակ թիվը)	44	107	114	115	141	127	107	51	13	4	—	—	823
տոկոսը	100,0	100,0	100,0	100,0	100,0	92,7	74,3	39,84	10,0	2,4			

Աղյուսակ 4

Դաշտանային ցիկլի կանոնավորումը

Դաշտանային ցիկլի կանոնավորումը	Աղջիկների քանակը	Տոկոսը
Միանգամից	522	84,19
3—4 ամիս անց	17	2,74
1 տարի անց	9	1,45
2 տարի անց	4	0,65
Անկանոն դաշտան	45	7,26
Միայն մեկ անգամ	23	3,71

աղջիկներ (3,71 %) առաջին անգամ դաշտան են ունեցել մեր հետազոտության օրերին։ Տարբեր է եղել դաշտանային ցիկլի տևողությունը (աղյուսակ № 5), այն տատանվել է 21—40 օր և երբեմն ավելի, սակայն մեծ մասամբ (83,1 %) տևել է 28—30 օր։ Դաշտանային արտազատուկի տևողությունը ևս եղել է տարբեր՝ 2—3 օրից (5,81 %) 7 և ավելի (0,48 %), սակայն հիմնականում տևել է 3—5 օր (80,16 %) աղյուսակ № 6։ 68 աղջիկներ (11,0 %) դաշտանի ժամանակ ունեցել են առատ արտազատուկ (աղյուսակ № 7), 27-ը՝ (4,4 %) ոչ միշտ առատ, 7-ը՝ (1,1 %) քիչ քանակի, իսկ 518-ը (83,5 %) ունեցել են չափավոր քանակի արյուն։ Հայտնի է, որ որոշ դեպքերում դաշտանը ուղեկցվում է ցավերով։ Մեր ուսումնասիրության ժամանակ այն դիտվել է 173 (27,9 %) աղջիկների մոտ (աղյուսակ № 8), սակայն տարբեր է եղել ցավի բնույթը։ Ուժեղ ցավեր են ունեցել 14 աղջիկներ (2,3 %), չափավոր՝ 75 (12,1 %), ոչ միշտ ցավեր՝ 84 (13,5 %) և առանց ցավի՝ 447 (72,1 %)։ Մեզ հետաքրքրել է

Աղյուսակ 5

Դաշտանային ցիկլի տևողությունը

Դաշտանային ցիկլի տևողությունը	Հետազոտվող աղջիկների քանակը	
	թիվը	տոկոսը
Մինչև 21 օր	7	1,1
24—27	9	1,5
28—30	515	83,1
31—35	40	6,4
36—40	7	1,1
40 և ավել	19	3,1
Միայն մեկ անգամ	23	3,7

Աղյուսակ 6

Դաշտանային արտադատուկի տևողությունը

Դաշտանային արտադատուկի տևողությունը	Հետազոտվող աղջիկների քանակը	
	թիվը	տոկոսը
2—3 օր	36	5,81
4—5	497	80,16
6—7	84	13,55
7 և ավել	3	0,48

Աղյուսակ 7

Դաշտանային արտադատուկի ինտենսիվությունը

Դաշտանային արտադատուկի ինտենսիվությունը	Հետազոտվող աղջիկների քանակը	
	թիվը	տոկոսը
Առատ	68	11,0
Ոչ միշտ առատ	27	4.4
Քիչ քանակի	7	1,1
Չափավոր	518	83,5

Աղյուսակ 8

Դաշտանի ցավոտությունը

Ցավի դրսևորման աստիճանը	Հետազոտվող աղջիկների քանակը	
	թիվը	տոկոսը
Շատ ցավոտ	14	2,3
Չափավոր ցավոտ	75	12,1
Ոչ միշտ ցավոտ	84	13,5
Առանց ցավերի	447	72,1

այն հարցը, թե ի՞նչպիսի ազդեցություն են ունեցել վաղ մանկական հասակում և հետագայում կրած հիվանդությունները դաշտանային ցիկլի վրա, պարզվել է, որ ցավոտ, առատ, երկարատև դաշտան ունեցել են թե հիվանդ և թե գործնական առողջ աղջիկները, սակայն ցավոտ դաշտանի պատճառը մեծ մասամբ եղել է ներվային գործոնը՝ վախը։ Այդ երևույթի անակնկալությունը, որը և որոշ դեպքերում տեղիք է տվել նողկանքի զգացման, փսխումի, իսկ առանձին դեպքերում՝ ուշաթափության։

Կատարված հետազոտությունները հիմք են տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Երկրորդային սեռական նշանների աճը և զարգացումը հիմնականում սկսվել է 11—12 տարեկանից, շարունակվելով հաջորդ տարիներին, այն սերտորեն կապված է առաջին դաշտանը սկսվելու հետ, սակայն առաջանում է նրանից շուտ։

2. Սիսիանի շրջանի դպրոցահասակ աղջիկների առաջին դաշտանը սկսվում է 13,55±0,04 տարեկան հասակում։ Դաշտանը հիմնականում անցավ է, կանոնավոր և նորմալ։

3. Երկրորդային սեռական նշանների զարգացումով և դաշտանի սկսումով դեռևս չի ավարտվում աղջկա սեռական հասունացումը, այն շարունակվում է և 18 տարեկանից հետո։

4. Անհրաժեշտ է դեռահասներին նախապատրաստել սեռական հասունացմանը, բացատրել աղջկա օրգանիզմի կենսաբանական առանձնահատկությունները, դաշտանի սկսման պատճառները, անհրաժեշտությունը, մեծ ուշադրություն դարձնելով անձնական հիգիենայի կանոնների պահպանմանը։

Մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ.

Ստացված է 10/XII 1976 թ.

С. М. ГЕВОРКЯН

МЕНСТРУАЛЬНАЯ ФУНКЦИЯ И ПОЛОВОЕ СОЗРЕВАНИЕ У ШКОЛЬНИЦ СИСИАНСКОГО РАЙОНА

Резюме

В целях изучения менструальной функции, выявления характера и частоты нарушений менструального цикла в период полового созревания, а также улучшения здоровья школьниц мы рассмотрели характер, течение и становление менструальной функции у 1443 девочек-школьниц в возрасте от 7 до 18 лет.

Исследования показывают, что рост и развитие вторичных половых признаков тесно связаны с временем появления первой менструации и обычно проявляются раньше ее. Наиболее интенсивное развитие их происходит в возрасте 13—14 лет.

В целях улучшения здоровья школьниц необходимо периодически проводить санитарно-профилактические мероприятия.

ЛИТЕРАТУРА

1. *Арешев Г. Я.* Акушерство и женские болезни, 1935, т. 46, кн. 1, стр. 11.
2. *Бутомо В. Г.* Вопросы теоретич. обоснования и практических методов рационализации родовспоможения Л., 1950.
3. *Борисова Ю. Ф.* Дисс. канд. М., 1965.
4. *Геворкян С. М.* Сборник научных трудов НИИ акушерства и гинекологии, т. 5—6. Ереван, 1970, стр. 349.
5. *Геворкян С. М.* Журнал экспериментальной и клинической медицины АН АрмССР, 1973, т. 13, стр. 107.
6 *Груздев В. С.* Начало половой жизни у жительниц России в зависимости от влияющих на нее факторов. СПб. 1894.
7. *Заводова А. С.* Дисс. канд. М., 1977.
8. *Маркарян П. А.* Акушерство, 1960.
9. *Миллере Р. К.* Дисс. канд. Рига, 1965.
10. *Мусаелян В. М.* Автореферат дисс. канд. Ереван, 1965.
11. *Ставицкая А. Б., Арон Д. И.* Методика исследования физического развития детей и подростков. М., 1959.